Հաստատված է
«Հայկական խորհուրդ» հետազոտական կենտրոն
հասարակական կազմակերպության ընդհանուր ժողովի կողմից
2025թ. դեկտեմբերի 29

նախագահ՝ Ա. Քոչինյան

Ռազմավարական զարգացման ծրագիր՝ 2026–2030թթ.

«Հայկական խորհուրդ»
հետազոտական կենտրոն հասարակական կազմակերպություն

Նախագահի կողմից

«Հայկական խորհուրդ» հետազոտական կենտրոն հասարակական կազմակերպության ռազմավարական զարգացման ծրագրի նպատակն է՝ ներկայացնել հաջորդող 5 տարվա ընթացքում կենտրոնի կողմից իրականացվելիք գործողություններն ու դրանց արդյունավետ իրագործման համար նախատեսվող քայլերն ու միջոցառումները:

Այս փաստաթղթում կանդրադառնանք աշխարհի, տարածաշրջանի, Հայաստանի և մեր կազմակերպության ներկայիս իրավիճակին: Համատեքստում կքննարկենք կազմակերպության տեսլականը, առաքելությունը, նպատակներն ու արժեքները, ընդգծելով՝ ինչպես ենք տրամադրելու փաստահեն տեղեկատվություն՝ քաղաքականություններ մշակելու և հանրային բանավեճեր ծավալելու համար:

Ռազմավարությունը գրվել է այնպիսի ժամանակահատվածում, երբ Հայաստանը կանգնած է աննախադեպ մարտահրավերների առջև՝ միաժամանակ տարբեր ցուցանիշներով բացառիկ լավ արդյունքներ գրանցելով: Համախառն ազգային եկամտով չափվող տնտեսական աճը բարձր է, իսկ տնտեսության վերականգնումը COVID-19-ից և 2020թ. պատերազմից հետո գերազանցել է ընդհանուր սպասելիքները: Գործազրկության մակարդակը նվազում է, հանրային ֆինանսական միջոցների ավելցուկ կա:

Տնտեսական ցուցանիշներից բացի, Հայաստանը կանգնած է մի շարք այլ խնդիրների առջև:

Գլոբալ տեսանկյունից կան փոփոխվող տարբեր գործոններ, որոնք ազդելու են հայաստանյան կյանքի վրա: Տեխնոլոգիական զարգացումը, մասնավորապես, արհեստական բանականության (ԱԲ) կիրառումը, հավանաբար կավելանա՝ առավել դժվար կանխատեսելի հետևանքներով: Կլիմայի փոփոխությունը նույնպես կշարունակվի, եթե նույնիսկ ջերմոցային գազերի արտանետումների կրճատման ուղղությամբ առաջընթացներ գրանցվեն:

Աշխարհաքաղաքականությունն ու տարածաշրջանային քաղաքականությունը ևս անկայունության միջավայր են ստեղծում, ինչի օրինակներից են Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության կնքման երկարաձգված գործընթացը, Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման ձգձգումը: Հաշվի առնելով այս և նմանատիպ այլ մարտահրավերները, օրինակ, Ռուսաստանի կողմից Հայաստանի դեմ տարվող հիբրիդային պատերազմը, հստակ է, որ քաղաքականություն մշակելու գործում հետազոտական բազայի ու փաստահեն նյութերի կարիքն ու անհրաժեշտությունը առաջնային են: Մենք կքննարկենք և կհասցեագրենք քաղաքական, անվտանգային, տնտեսական, սոցիալական և բնապահպանական խնդիրները՝ նախ և առաջ համոզվելով, որ ունենք հստակ պատկերացում ներկայացվող խնդիրների և առնչվող գործընթացների վերաբերյալ:

Հավատարիմ մնալով մեր կենտրոնի կարգախոսին՝ **«ժողովրդավարություն, կայուն զարգացում և անվտանգություն»,** ռազմավարության մեջ նկարագրված այս գործողությունների միջոցով մենք միտված ենք ապահովել որակյալ և խորքային հետազոտություններ՝ Հայաստանում քաղաքականությունների մշակմանն ու որոշումների կայացմանն աջակցելու համար:

«Հայկական խորհրդի» նախագահ Արեգ Քոչինյան

Ներածություն

«Հայկական խորհուրդ» հետազոտական կենտրոն հասարակական կազմակերպությունը սկսում է 2026–2030թթ. ռազմավարական օրակարգը՝ ժողովրդավարական դիմակայունությունը, կայուն անվտանգային կառավարումն ու փաստահեն քաղաքականության մշակումը Հայաստանում և տարածաշրջանում առաջ մղելու վերանայված հանձնառությամբ: Հայկական խորհուրդը, որպես անկախ

և անկուսակցական վերլուծական կենտրոն, իրականացնում է ռազմավարական հետազոտություններ, արդյունավետ հանրային հաղորդակցությունների կազմում և քաղաքական թիրախային խորհրդատվություններ արտաքին քաղաքականության, ազգային անվտանգության և ժողովրդավարական զարգացման ոլորտներում:

Ծրագրային նախորդ շրջափուլի ընթացքում «Հայկական խորհուրդը» սկսնակ նախաձեռնությունից հաջողությամբ դարձավ լիարժեք ձևավորված և գործող վերլուծական կենտրոն՝ ուժեղացված ինստիտուցիոնալ շրջանակներով, ռազմավարական հստակ տեսլականով և զգալիորեն ընդլայնված ազդեցությամբ ինչպես ներքին, այնպես էլ միջազգային շրջանակներում:

Կառավարման հզորացված շրջանակների, արդյունավետ հետազոտությունների, շահերի նպատակային պաշտպանության և հանրային իրազեկող արշավների միջոցով «Հայկական խորհուրդը» բարելավել է իր առաքելությունը՝ նպաստելով ժողովրդավարական դիմակայունությանն ու տարածաշրջանային խաղաղությանը: Կազմակերպության տեղական և միջազգային գործընկերային զարգացող ցանցի միջոցով՝ ընդլայնված մեդիա-ներկայությամբ և Հայաստանի քաղաքական ղեկավարության հետ ուղղակի ներգրավվածությամբ, «Հայկական խորհուրդը» դիրքավորվել է որպես հուսալի և ազդեցիկ ձայն երկրի ռազմավարական ապագան ձևավորելու գործում: Ծրագրային առաջնագծում կազմակերպությունը դարձել է Հայաստանի ամենաակտիվ դերակատարներից մեկը երկրորդ ուղու դիվանագիտության և քաղաքական շահերի պաշտպանության ոլորտում: Մեկ տարվա ընթացքում կազմակերպությունն անցկացրել է երկրորդ ուղու 60-ից ավել երկկողմ հանդիպումներ ադրբեջանցի և թուրք գործընկերների հետ՝ դառնալով ոլորտում առավել ակտիվ հայկական վերլուծական կենտրոն:

Տեղական մակարդակում կազմակերպությունն ընդլայնեց իր հանրային ներգրավվածությունը՝ պատրաստելով մուլտիմեդիա նյութեր և համագործակցելով քաղաքացիական հասարակության առաջնորդների և քաղաքականություն մշակողների հետ Հայաստան-Ադրբեջան խաղաղության բանակցային գործընթացի, ժողովրդավարական դիմակայունության և ռազմավարական անվտանգության հարցերի շուրջ: Հիմք ընդունելով այս ձեռքբերումները՝ «Հայկական խորհուրդն» ունի բոլոր նախապայմաններն՝ առաջիկա տարիներին խորացնելու իր ազդեցությունը, ընդլայնելու հասանելիությունը և առավելագույնս նպաստելու Հայաստանի ժողովրդավարական և ռազմավարական վերափոխմանը:

Համատեքստ. Հայաստանի անվտանգային և քաղաքական փոփոխվող միջավայրը

2022-2025 թվականների ընթացքում Հայաստանը մեծապես վերանայել է իր աշխարհաքաղաքական կողմնորոշումն ու ներքին քաղաքական առաջնահերթությունները: Ապակայունացնող իրադարձությունների թողած հետևանքները, ներառյալ՝ 2021-2022 թվականների հարձակումները Հայաստանի ինքնիշխան տարածքի վրա, 2022 թվականի Լաչինի միջանցքի շրջափակումը և 2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի հայերի բռնի տեղահանումը, հիմնովին վերաձևակերպել են երկրի հանրային տրամադրություններն ու ռազմավարական հաշվարկները: Այս զարգացումների հետևանքով Հայաստանն սկսել է հեռանալ տարածաշրջանում ավանդաբար գերիշխող դերակատարներից և ակտիվորեն ձգտել ավելի մեծ ժողովրդավարական պետությունների և հաստատությունների հետ համագործակցության: Գլխավոր փոփոխություններից են ՀԱՊԿ-ում ակտիվ մասնակցության դադարեցումը, ռուս սահմանապահների դուրսբերումը հիմնական անցակետերից, ԵՄ-ի հետ վիզային ռեժիմի ազատականացման երկխոսության մեկնարկը, ինչպես նաև՝ 2024 և 2025 թվականներին ԱՄՆ-ի և Եվրոպական միության հետ առանցքային գործակցության համաձայնագրերի ստորագրումը:

Մյուս կողմից, 2025 թվականի ընթացքում բոլորովին նոր թափ առավ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացը և, որպես դրա հետևանք, Հայաստան-Թուրքիա կարգավորումը: Արու-Դաբիի և Վաշինգտոնի հանդիպումները ու դրանցում ձեռք բերված պայմանավորվածությունները հնարավորություններ են ստեղծում Հարավային Կովկասում երկար սպասված իրական, հարատև ու անշրջելի խաղաղության կառուցման համար: Հարևանների հետ խաղաղությունը, տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչումը և բարիդրացիությունը հանդիսանում են կազմակերպության համար բացարձակ առաջնահերթություններ, որոնց վրա միայն հնարավոր կլինի կառուցել բազմավեկտոր արտաքին քաղաքականություն և սերտացնել հարաբերությունների հավաքական Արևմուտքի երկրների հետ:

Այս կարևոր փոփոխությունն ընդգծել է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, փորձագիտական ցանցերի և անկախ հաստատությունների դերը խաղաղություն հաստատելու, հանրային դիվանագիտության և արդիականացման մեջ:

Հայկական խորհրդի դերը՝ որպես արձագանք փոխակերպվող դարաշրջանին

Աշխարհաքաղաքական կողմնորոշումների փոփոխության, պատերազմի հետ կապված մարտահրավերների և ժողովրդավարական ձգտումների ներկայիս դարաշրջանում «Հայկական խորհուրդ» հետազոտական կենտրոնը միտված է ձևավորել Հայաստանի համար դիմակայուն և երկարաժամկետ ազգային օրակարգ: Որպես վստահելի, անկուսակցական, գիտելիքահեն վերլուծական կենտրոն՝ կազմակերպությունը կարճ ժամանակահատվածում մեծ ճանաչում է ստացել քաղաքական և աշխարհաքաղաքական գործընթացների, մեդիայի, հանրային կարծիքի, կրթության, կիրառական հետազոտության և վերլուծության վրա ունեցած իր ազդեցության շնորհիվ:

Ռացիոնալ, ապացուցահեն մտածողությունը խթանելու և հանրային իրազեկ երկխոսությունն ամրապնդելու առաքելությամբ, կազմակերպությունն անցկացնում է ռիսկերի և սպառնալիքների համապարփակ գնահատում, իրականացնում Հայաստանին, ավելի լայն տարածաշրջանին և գլոբալ դինամիկային վերաբերող ռազմաքաղաքական հարցերի շուրջ քաղաքական կանխատեսումներ, ինչպես նաև մշակում հակազդեցության քայլեր՝ հնարավոր ռիսկերը նախանշելու և մեղմելու համար: Փաստահեն վերլուծության և գործնական առաջարկությունների միջոցով կազմակերպությունը բարձրացնում է հանրության պատկերացումները և աջակցում իրազեկ որոշումների կայացմանը:

Առաջնորդվելով **«Ժողովրդավարություն, կայուն զարգացում, անվտանգություն»** կարգախոսով՝ կազմակերպությունը հստակ տեսլական է սահմանել՝ կերտելու անվտանգ, ժողովրդավարական և դիմակայուն Հայաստան՝ հիմնված մարդու իրավունքների, օրենքի առջև հավասարության և միջազգային համագործակցության վրա, որտեղ քաղաքականության մշակումը ձևավորվում է խիստ վերլուծության, երկխոսության և խաղաղությանը, արդարությանն ու կայուն զարգացմանը անսասանորեն հանձնառու լինելու միջոցով:

Հայաստանի կառավարության հավանությանն արժանացած **«Իրական Հայաստան»** հայեցակարգին համահունչ՝ մեր կազմակերպությունն ամբողջությամբ աջակցում է Հայաստանի գործնական և հավասարակշռված արտաքին քաղաքական օրակարգին: Այս մոտեցումը հիմնված է այն համոզմունքի վրա, որ բոլոր ջանքերը պետք է ուղղվեն Հայաստանի՝ միջազգայնորեն ճանաչված սահմանների շրջանակներում պետականության ամրապնդմանը: Մենք կիսում ենք երկրի ինքնիշխան, խաղաղ և

անվտանգ ապագան կառուցելու հանձնառությունը՝ միջազգային համագործակցության բազմաթիվ օրինակների միջոցով:

Կարճաժամկետ հեռանկարում մենք ընդունում ենք Հայաստանի դիրքորոշումը՝ ձեռք բերել ոչ դաշինքային կարգավիճակ՝ միևնույն ժամանակ աջակցելով երկրի եվրատլանտյան ինտեգրման երկարաժամկետ մոտեցմանը: Մեր աշխատանքը կենտրոնացած է այս նպատակների վրա՝ ժողովրդավարական զարգացման, ինստիտուցիոնալ դիմադրողականության և տարածաշրջանային համագործակցության միջոցով:

Տարածաշրջանային կարգավորման ջանքերի մեջ ակտիվ մասնակցություն ունենալու միջոցով, ներառյալ՝ Հայաստան-Թուրքիա և Հայաստան-Ադրբեջան երկխոսությունները, կազմակերպությունը Հայաստանի և Հարավային Կովկասի մակարդակով կենսական դեր է խաղում իրազեկված քաղաքական երկխոսության առաջխաղացման գործում: Կազմակերպության նպատակն է՝ մանրակրկիտ ուսումնասիրել, վերլուծել և գնահատել սպառնալիքները, միևնույն ժամանակ քաղաքական կանխատեսումներ տրամադրելով Հայաստանի, տարածաշրջանի և ավելի լայն աշխարհաքաղաքական զարգացումներին վերաբերող ռազմաքաղաքական հարցերի շուրջ: Ավելին, այն կենտրոնանում է հակազդեցության միջոցների մշակման, արդյունքների կանխատեսման և փաստահեն վերլուծությունների ու գործնական առաջարկությունների ներկայացման վրա՝ բարձրացնելու հանրության իրազեկումն ու աջակցելու տեղեկացված որոշումների կայացմանը: Ճկուն, բազմագիտակարգ թիմի շնորհիվ կենտրոնը ձգտում է ընդլայնել իր ռազմավարական ազդեցությունը՝ խորացնելով հետազոտական կարողությունները, մեծացնելով հանրային ներգրավվածությունն ու հետևողականորեն ձևավորելով Հայաստանի արտաքին քաղաքական տեսլականը գիտելիքահեն նախաձեռնությունների, շահերի պաշտպանական գործունեության և համալիր երկխոսության միջոցով:

Հաջողությունների վրա հիմնվելով

Կազմակերպությունը կերտել է կայուն հեղինակություն քաղաքական և աշխարհաքաղաքական գործընթացներում, մեդիա ոլորտում, հանրային կարծիքի և կրթության ոլորտում, կիբառական հետազոտության և վերլուծությունների գործում՝ արդյունավետ ծրագրեր իրականացնելու համար վստահելով իր փոքր, բայց ճկուն թիմին:

Հիմնվելով այնպիսի հաջող նախաձեռնությունների վրա, ինչպիսիք են **«Կառուցելով ավելի դիմադրունակ ժողովրդավարություն»** ծրագիրը և «Դիլեմա» հաղորդաշարը, կազմակերպությունը պլանավորում է ընդլայնել իր ջանքերը աշխատանքային գերազանցության, ընդլայնված գործընկերության և ֆինանսավորման նորարարական մոդելների միջոցով:

«Կառուցելով ավելի դիմադրունակ ժողովրդավարություն»

Այս նախագիծը եղել է կազմակերպության հաջողության հիմնական գրավականներից մեկը, որը ներառում է հանրային կրթությունը, քաղաքականության մշակումը և ռազմավարական հաղորդակցությունը՝ հետևյալ գործողությունների միջոցով.

- ***Վիդեոշարք***. 1-րոպեանոց սոցիալական հոլովակները կենտրոնանում են կեղծ տեղեկատվության և քարոզչության դեմ պայքարի վրա՝ փաստահեն, հակիրճ և դյուրին մոտեցմամբ: Բովանդակությունը ներկայացվում է օբյեկտիվ և գրավիչ կերպով՝ նպատակ ունենալով տեղեկատվություն տրամադրել և արձագանք գտնել լայն լսարանի, հատկապես՝ երիտասարդության շրջանում: Հատկանշական է, որ այս նախաձեռնությունն արդեն իսկ ապացուցել է իր արդյունավետությունը. յուրաքանչյուր հոլովակ ապահովում է միջինում **շուրջ 350.000 դիտում**, իսկ 15 թողարկումներն ապահովել են ընդհանուր մոտ **4,2 միլիոն դիտում**:
- «***Ժողովրդավարական անվտանգություն***» առցանց վերլուծական ամսագիր, որտեղ ներկայացված են կազմակերպության փորձագետների նյութերը: Յուրաքանչյուր հոդվածի համար ապահովելով շուրջ 2000 ընթերցող՝ ամսագիրը ներկայանում է որպես կարծիքներ և գաղափարներ կիսելու ու տարածելու կարևորագույն հարթակ՝ տարբեր ոլորտների շուրջ մեր առաջարկություններով, որոնք ազդեցություն են ունեցել անվտանգության հետ կապված քաղաքականության մշակման վրա:
- ***Քաղաքականության փաստաթղթեր***. հետազոտահեն նյութեր, որոնք կենտրոնանում են ժողովրդավարական դիմադրունակության և անվտանգության ռազմավարության վրա:
- ***Շահագրգիռ կողմերի երկխոսություններ***. շահագրգիռ կողմերին՝ դիվանագետներին, քաղաքացիական հասարակությանը, լրատվամիջոցների ներկայացուցիչներին, ուսանողներին, քաղաքացիներին և այլոց տրամադրվող

բրիֆինգներ՝ ավելի քան 60 փակ հանդիպումների տեսքով, որոնք կենտրոնանում են հրատապ խնդիրների վրա:

● *«Դիլեմա»* հաղորդաշար. «Բուն» TV-ի հետ համատեղ ստեղծված այս հաղորդաշարը խթանում է քաղաքացիական ներգրավվածությունը և ազգային անվտանգության ու ժողովրդավարական կառավարման վերաբերյալ քննարկումները: *«Դիլեմա»*-ն «Բուն» TV-ի ամենաշատ դիտված ծրագիրն է (լավագույն 100 հեռարձակումների 40%-ը), YouTube-ում ամեն հաղորդում ունենում է 5 -10.000 դիտում:

● *Երկրորդ ուղու դիվանագիտություն.* «Հայկական խորհուրդը» պահպանում է ուղիղ աշխատանքային հարաբերություններ ԱՄՆ պետքարտուղարության, Գերմանիայի, Լեհաստանի և Ռումինիայի ԱԳՆ-ների, ինչպես նաև ԵՄ հատուկ ներկայացուցչի գրասենյակի և Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության հետ: Կառույցի փորձագետները ակտիվորեն ներգրավված են երկրորդ ուղու դիվանագիտության մեջ, որոնք զեկուցվող ժամանակահատվածում անցկացրել են ավելի քան 60 հանդիպում ադրբեջանցի և թուրք գործընկերների հետ, ինչը կազմակերպությունը դիրքավորում է որպես Հայաստանի՝ այս ոլորտում ամենաակտիվ վերլուծական կենտրոն: Բացի այդ, վարչապետի հետ պարբերաբար հանդիպող ոչ պաշտոնական խորհրդատվական խմբի անդամ լինելով, կազմակերպության նախագահն իր քաղաքական փորձագիտական ներդրումն է ունենում վարչապետի աշխատակազմի և անվտանգության խորհրդի հետ պարբերական խորհրդակցությունների միջոցով:

Այս և այլ նախաձեռնություններն իրականություն են դարձել **Ժողովրդավարության ազգային հիմնադրամի, Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի, «Ֆրիդրիխ-Նաումման» հիմնադրամի** աջակցության և հայկական **մասնավոր հատվածի** ներդրումների շնորհիվ:

Ինստիտուցիոնալ և արտաքին մարտահրավերներ

Չնայած այս առաջընթացին՝ կենտրոնն ունի ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ՝ արտաքին մարտահրավերներ, որոնք նպատակադրված է հաղթահարել մանրամասն պլանավորված և իրականացվելիք ռազմավարական զարգացման ծրագրերի միջոցով: Հիմնական կառուցվածքային մարտահրավերներից է Հայաստանի կառավարության՝ վերլուծական կենտրոնների կամ քաղհասարակության կազմակերպությունների հետ քաղաքականության մշակման գործընթացում աշխատելու փորձի բացակայությունը:

Ողորտը պատմականորեն եղել է խիստ բևեռացված՝ փաստահեն խորհրդատվության և համագործակցության սահմանափակ ինստիտուցիոնալ կարողությամբ: Սա փորձագետների ձայները հաճախ թողել է որոշումների կայացման լուսանցքում՝ հետագայում խորացնելով քաղաքացիական հասարակության և պետական ինստիտուտների միջև բացը:

Միևնույն ժամանակ, ֆինանսավորման փոփոխվող դաշտը զգալի խոչընդոտներ է առաջ բերել: ԱՄՆ և միջազգային դոնորների առաջնահերթությունների փոփոխությունները, մասնավորապես, ժողովրդավարության օգնության խոշոր ծրագրերի կրճատումը կամ դադարեցումը, քչացրել են քաղաքացիական հասարակության կայուն աջակցության հնարավորությունները: Սա պարադոքս է ստեղծում. հենց տեղական փորձագիտության, անկախ վերլուծության և հանրային ներգրավվածության պահանջարկն աճում է, «Հայկական խորհրդի» ՝պես դերակատարների ինստիտուցիոնալ և ֆինանսական դիմադրունակությունը զգալի հարվածի տակ է հայտնվում:

Բացի այդ, քաղաքական բևեռացման սրացումն ու հակաժողովրդավարական պատումների տարածումը, որոնց ակունքները թե՛ ներքին, թե՛ արտաքին դերակատարներից են բխում, սպառնում են կառուցողական քաղաքական երկխոսությանը և ժողովրդավարական բազմազանությանը: Այդպիսի միջավայրում վերլուծական կենտրոնի համար չեզոք, անկուսակցական դիրք պահպանելը դառնում է ոչ միայն ավելի խրթին, այլև՝ առաջնային:

Մեր պատասխանը. 2026–2030 թվականների ռազմավարական զարգացման ծրագիր

Այս փոփոխություններին ի պատասխան՝ **«Հայկական խորհրդի» 2026–2030թթ. ռազմավարական զարգացման ծրագիրը** ներկայացնում է ինստիտուցիոնալ աճի, ազդեցության վրա հիմնված պլանավորման և երկարաժամկետ կայունության համապարփակ ճանապարհային քարտեզ:

2026–2030 թվականների ռազմավարական առաջնահերթություններ

Կազմակերպության զարգացումը հաջորդ հինգ տարվա ընթացքում պայմանավորվելու է վեց փոխկապակցված առաջնահերթություններով.

1. **Ինստիտուցիոնալ կայունություն**
2. **Կազմակերպության աճ**

3. Ծրագրային նորարարություն
4. Տարածաշրջանային և միջազգային համագործակցություն
5. Աշխատանքային գերազանցություն
6. Քաղաքականության ոլորտում ներգրավվածություն և պաշտպանություն

1) Ինստիտուցիոնալ կայունություն

Հոգաբարձուների խորհրդի ստեղծում *2026թ.*

Կազմակերպության կառավարման, հուսալիության և ռազմավարական դիմադրունակության բարելավման ուղղությամբ կարևոր քայլ ձեռնարկելու նպատակով կազմակերպությունը կստեղծի հոգաբարձուների առաջին խորհուրդը, որը պատասխանատու կլինի կազմակերպության բարձր մակարդակի հսկողության և ուղղորդման համար: Խորհուրդը կապահովի, որ կազմակերպությունը հավատարիմ մնա իր առաքելությանը, լինի ֆինանսապես կայուն և լավ դիրքավորված, որպեսզի կարողանա անցնել առավել բարդացող գործառնական լանդշաֆտի միջով:

Համաձայն կազմակերպության ողջամիտ կառավարման հանձնառության, հոգաբարձուների խորհուրդը կկազմվի տարբեր ոլորտներից՝ ակադեմիական, մասնավոր ոլորտի և քաղաքացիական հասարակության փորձառու մասնագետներից: Նրանց դերը կլինի

- հաստատել և վերահսկել երկարաժամկետ ռազմավարության իրականացումը,
- պահպանել կազմակերպության առաքելությունն ու արժեքները,
- ապահովել էթիկական վարքագիծ և կազմակերպչական ծրագրային հաշվետվողականություն:

Արտակարգ իրավիճակների ֆոնդի ստեղծում և ֆինանսավորման դիվերսիֆիկացում *2026-2027թթ.*

«Հայկական խորհրդի» ֆինանսական դիմադրունակությունը կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ապահովելու նպատակով կազմակերպությունը նախատեսում է

- կուտակել պահուստներ վեց **ամսվա հիմնական գործառնական ծախսերի** համար, որը կկազմի 23 միլիոն դրամ՝ աշխատավարձեր, վարձակալություն, կոմունալ ծառայություններ, հիմնական գործառույթներ, կազմակերպության շարունակականությունն արտակարգ իրավիճակների դեպքում ապահովելու նպատակով:
- դիվերսիֆիկացնել ֆինանսավորման հոսքերը և համագործակցել միջազգային դոնորների, ակադեմիական հաստատությունների և մասնավոր ոլորտի հետ, ներառյալ՝ դոնորական կազմակերպություններ, առնվազն երեք երկրից և/կամ երեք միջազգային կազմակերպությունից:
- աջակցել հարկային ներքին քաղաքականությունը, որը եկամուտներ է առաջացնում կազմակերպության համար, խթանել Հայաստանում ՀԿ ոլորտի ընդհանուր կենսունակությունը: Մասնավորապես, հետևել հարկային բարեփոխման երկու քաղաքականության իրագործմանը.
    - **1% մեխանիզմ.** Հետևելով մի շարք եվրոպական երկրներում կիրառվող **«1% մեխանիզմին»**՝ այս առաջարկությունը կոչ է անում հնարավորություն տալ հայկական ձեռնարկություններին՝ իրենց առկա եկամտահարկի 1%-ը հատկացնել իրենց իսկ ընտրած ՀԿ-ին, քաղաքացիական հասարակությանն ուղղակի աջակցությունը հնարավոր դարձնելով՝ առանց մեծացնելու նրանց հարկային բեռը:
    - **Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության.** Հարկային խթան մասնավոր ընկերությունների համար, որոնք իրականացնում են կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) նախաձեռնություններ:

Հաջորդիվ, ամրապնդել կապերը մասնավոր կորպորատիվ ոլորտի հետ՝ խթանելու ռազմավարական գործակցությունը, աջակցելու նորարարությունը և ընդլայնելու մեր նախաձեռնությունների ազդեցությունը:

Ամրապնդել հարաբերություններն աշխարհի տարբեր երկրներում գտնվող հայկական սփյուռքի կազմակերպությունների և հիմնադրամների հետ, որոնք համաձայն են մեր առաքելությանը և ռազմավարական տեսլականին՝ արտերկրում մեր ինստիտուցիոնալ արդյունավետությունը բարելավելու և ֆինանսավորման հնարավորություններն ընդլայնելու համար:

2) **Կազմակերպության աճ և վերաբրենդավորման շարունակություն**

Վերաբրենդավորում. 2026թ. հունվար - 2026թ. մայիս

Վերաբրենդավորման գործընթացը կներառի.

- **Հաղորդակցության համապարփակ վերակազմակերպում,** ներառյալ՝ վերանախագծված կայքէջ, թարմացված հաղորդակցության պլան և այլ համապատասխան փաստաթղթեր, հրապարակման ձևանմուշներ, ռազմավարական հաղորդակցություն և սոցիալական ցանցերում ավելի ակտիվ ներկայություն, որը կղեկավարվի նորանշանակ սոցիալական մեդիայի մարկետինգի (SMM) մասնագետի կողմից,
- **Ընդլայնված հետազոտական և գործունեության շրջանակ.** շարունակելով մեր հիմնական աշխատանքն անվտանգության ոլորտում՝ մենք ընդլայնելու ենք մեր հետազոտությունների շրջանակը՝ որդեգրելով ավելի համապարփակ մոտեցում: Այն արդյունավետ կլուծի մեր ունեցած սկզբունքներին՝ **«ժողովրդավարություն, կայուն զարգացում և անվտանգություն»** համապատասխանող հանրային քաղաքականության հարցերը: Սրանք ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալով.
    - **Ժողովրդավարություն՝** ժողովրդավարական դիմադրունակություն, քաղաքացիական կառավարում, սոցիալական բազմազանություն (գենդերային հավասարություն, երիտասարդության հզորացում, գյուղական համայնքներ),
    - **Կայուն զարգացում՝** տնտեսական քաղաքականություն, էներգետիկ և շրջակա միջավայրի քաղաքականություն,
    - **Անվտանգություն՝** տեխնոլոգիական հուսալիություն և անվտանգություն (կիբերանվտանգություն, ապատեղեկատվություն), ենթակառուցվածքներ (ջրամատակարարման կառավարում և անվտանգություն, սննդային անվտանգություն), հակամարտությունների փոխակերպում, տարածաշրջանային համագործակցություն, խաղաղաշինություն և այլն:

Բարելավված լոգիստիկ պլանավորում. *2026թ. դեկտեմբեր - 2029թ. դեկտեմբեր*

- Մեր կազմակերպությունն այժմ գործում է վեց լրիվ դրույքից բաղկացած անձնակազմով, որոնք նվիրված են իրենց աշխատանքին. նախագահ, ծրագրերի համակարգող, գործադիր օգնական, ՍՄՄ մասնագետ, երկու մշտական

փորձագետ: Բացի այդ, մենք համագործակցում ենք չորս ասոցացված փորձագետի, թարգմանչի, խմբագրի և մաքրության ապահովման պատասխանատուի հետ: Հաշվապահական և իրավական ծառայություններն իրականացվում են մասնագիտացված կազմակերպության կողմից:

Առանցքային թիմի ընդլայնում

Ռազմավարական նպատակներն արդյունավետ իրականացնելու և տարածաշրջանային անվտանգության ու քաղաքականության հարցերի մեծացող բարդությանն արձագանքելու համար կազմակերպությունը կիրականացնի իր ինստիտուցիոնալ կարողությունների թիրախային ընդլայնում: Անձնակազմի համալրման հիմնական գործողություններից են.

- **Երրորդ մշտական փորձագետի հավաքագրում՝** կազմակերպության առաքելության շրջանակներում նոր կամ թերներկայացված ոլորտների մասնագիտացմամբ
- **Ասոցացված փորձագետների ֆոնդի ընդլայնում՝** գրավելով առնվազն երկու լրացուցիչ ասոցացված փորձագետ, որով կամբողջացվի Հայաստանից և լայն տարածաշրջանից կապակցված գիտնականների և խորհրդատուների ցանցն ու կապահովվի, որ կազմակերպությունը կարողանա արագ և հավաստի կերպով արձագանքել բազմազան թեմատիկ առաջնահերթությունների, ներառյալ՝ ենթակառուցվածքներ, էներգետիկա, սննդային անվտանգություն, շրջակա միջավայրի անվտանգություն և հարակից ոլորտներ.
- **Նոր առանցքային վարչական անձնակազմի հավաքագրում**, ներառյալ.
  - **Ֆինանսական տնօրեն**, որը կկառավարի կազմակերպության ֆինանսական հոսքերը, կվարի հաշվապահությունը և կաշխատի օրենքի համապատասխանության և պայմանագրային վերանայման կարիքների ուղղությամբ,
  - **Արտապատվիրված փաստաբան**, որը կներկայացնի կազմակերպությունը հնարավոր դատական վարույթներում՝ ապահովելով արդյունավետ իրավաբանական պաշտպանություն, գործող կանոնակարգերին համապատասխանություն ու ինստիտուցիոնալ շահերի պաշտպանություն,

- **Ադմինիստրատիվ օգնական** – HR, որը կազմակերպության նախագահին կօգնի վերջինիս պարտականություններում և կմասնակցի անձնակազմի կառավարմանն ու աշխատանքային մթնոլորտի բարելավմանը:
- **Տարածաշրջանային ծրագրերի երկու համակարգող և օգնականներ**, որոնք կկատարեն տարածաշրջանային գրասենյակների վարչական աշխատանքները:

Միևնույն ժամանակ, ծրագրում ենք ապագա թեկնածուների համար բարելավել մասնագիտական փորձառությունն ու կամավորական հնարավորություններն՝ ըստ հետևյալի.

- ամրապնդել համագործակցությունն ինչպես պետական, այնպես էլ մասնավոր համալսարանների հետ,
- ստեղծել կառուցվածքային ուղիներ ուսանողական ներգրավվածության, ակադեմիական ճանաչման և հմտությունների զարգացման համար, ինչպիսիք են կամավորների համար հատուկ նախագծված ուսումնական ուղիները կամ փոքրամասշտաբ սերտիֆիկացման ծրագրերը (օրինակ, «Կամավոր մեդիա օգնական» կամ «Քաղաքականության կամավոր մասնակից»),
- հիմնել կացության ապահովման ծրագիր, որը մագիստրոս ուսանողներին կշնորհի հետազոտողի կարգավիճակ՝ հնարավորություն տալով նրանց աշխատել կազմակերպության առցանց ամսագրում,
- հաստատել պաշտոնական համագործակցություն կամավորների հետ աշխատող կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Birthright Armenia-ն, Armenian Volunteer Corps-ը, Repat Armenia-ն և նմանատիպ այլ նախաձեռնությունները, ընդլայնելով մեր մասին իրազեկումն ու ներգրավելով բարձր մոտիվացիա ունեցող անհատների:

Ինստիտուցիոնալ զարգացման մեր ջանքերի շրջանակում մենք ակտիվորեն ընդլայնելու և ամրապնդելու ենք մեր ներկայությունը ինչպես Հայաստանի մարզերում, այնպես էլ՝ Միացյալ Նահանգներում: Սա մեզ հնարավորություն կտա բարելավել մեր գործունեության ոլորտները և ավելի արդյունավետ լուծել ներկայիս և հետագա մարտահրավերները:

Մենք կանցնենք նաև ավելի արդյունավետ գրասենյակային տարածքի՝ հոգալով ընդլայնվող թիմի համար բավարար տարածություն ունենալու կարիքը, միաժամանակ ապահովելով հարմարավետ, արդյունավետ և կայուն աշխատանքային միջավայր:

Ուստի, կազմակերպությունը

1. կվարձակալի նոր գրասենյակային տարածք, որը կարող է տեղավորել ընդլայնվող հիմնական թիմը և ծառայել որպես հանդիպումների, սեմինարների և այցելու փորձագետների համար կայուն գործառնական բազա
2. Հայաստանում կբացի երկու տարածաշրջանային գրասենյակ
3. ԱՄՆ-ի մայրաքաղաք Վաշինգտոնում կբացի մեկ գրասենյակ

Այս գրասենյակները

- կապահովեն **մասնագիտական և մշտական աշխատանքային միջավայր** ինչպես մշտական անձնակազմի, այնպես էլ՝ առանձին խորհրդատուների համար
- հնարավոր կդարձնեն **անձնակազմի մասնագիտական զարգացումն**՝ ըստ ռազմավարական պլանի,
- որպես բարգավաճող կենտրոններ՝ կամրապնդեն **կազմակերպության մշակույթը** ինչպես անձնակազմի, այնպես էլ՝ Հայաստանի ապագայի գործում ներդրում ունեցող մասնագետների լայն համայնքի համար,
- **կամրապնդեն կազմակերպության հուսալիությունը** դոնորների, գործընկերների և շահագրգիռ կողմերի մոտ՝ նախանշելով երկարաժամկետ ներդրում ինստիտուցիոնալ զարգացման մեջ:

3) Ծրագրային նորարարություն՝ 2025թ. սեպտեմբեր - 2027թ. սեպտեմբեր

Հանրային ներգրավվածության և ժողովրդավարական դիմադրունակության իր հանձնառության շրջանակներում կազմակերպությունը զգալիորեն կընդլայնի իր **կրթական և հաղորդակցային տարածումը**՝ կենտրոնանալով քաղաքացիական գրագիտության ամրապնդման, իրազեկ երկխոսության խրախուսման և անվտանգային քաղաքականությունը լայն հանրությանն ավելի մատչելի դարձնելու վրա: Հիմնական գործողությունների մաս կկազմեն

- **առկա հաղորդակցային (մեդիա) հարթակների ընդլայնումը՝ ապահովելով մեդիա-նյութերի կանոնավոր և ավելի հաճախակի ստեղծում ու տարածում և կենտրոնանալով արդիական նյութերի վրա, մասնավորապես՝**

- **«Դիլեմա»՝** երկխոսության վրա հիմնված քննարկումների հաղորդաշար, որը կավելացնի թողարկումների քանակը, կունենա թեմատիկ մինի-շարքեր և համագործակցություն տարածաշրջանային փորձագետների, լրագրողների, հանրային գործիչների, մտավորականների և բիզնես-առաջնորդների հետ: Ապագայում շարունակելու ենք կիրառել դրա հաջողված փորձն ու գործարկելու ենք առանձին անգլերեն շարք՝ ներառելով ոչ հայախոս լսարանին ուղղված ծրագիր:
- **«Ժողովրդավարական անվտանգություն»՝** առցանց ամսագիր, որը կենտրոնացած է ժողովրդավարական ինստիտուտների և անվտանգության խաչմերուկի վրա, կզարգանա որպես փորձագիտական կարծիքների փոխանակման, գաղափարների գեներացման և քաղաքացիական կրթության հարթակ՝ ուղղված տեղական և միջազգային լսարանին: Ամսագիրը հասանելի կլինի նաև որպես պարբերական՝ հրապարակվելով տարին մեկ անգամ:
- **Կարճամետրաժ հոլովակներ (shorts)՝** մեկ րոպեանոց տեղեկատվական տեսանյութերի շարք, որը նպատակ ունի հասցեագրել արտաքին քարոզչությունը, հակազդել կեղծ տեղեկատվությանը և մարտահրավեր նետել գոյություն ունեցող միֆերին: Մենք պլանավորում ենք զարգացնել այն որպես վաղ արձագանքման մոդել՝ արդյունավետ հակազդելու հասարակության մեջ հակաժողովրդավարական հռետորաբանությանը:

Մեր նպատակն է նաև ընդլայնել մեր գործունեության հարթակները և բարելավել տարածման արդյունավետությունը՝ ակտիվություն ցուցաբերելով կազմակերպության հիմնական սոցիալական հարթակները (Meta [Facebook և Instagram], TikTok, X [նախկին Twitter] և Telegram)՝ մեդիա-նյութերը հասանելի դարձնելու համար:

Մուլտիմեդիա նոր ձևաչափերի զարգացում՝

- Ինֆոգրաֆիկա և ինտերակտիվ տեսողական նյութեր՝ մեր տեսանելիությունը սոցիալական մեդիա-հարթակներում բարձրացնելու համար,
- Կրթական վեբինարներ և քննարկումներ ուսանողների, ուսուցիչների և համայնքային ղեկավարների համար,
- Համագործակցություն տեղական մեդիա կազմակերպությունների հետ՝ տարածելու փաստերի վրա հիմնված նյութեր հայերեն և տարածաշրջանային այլ լեզուներով: Բացի այդ, կազմակերպության ամբողջ մեդիա-արտադրանքը հետևողականորեն կթարգմանվի անգլերեն՝ ապահովելով երկլեզու կայքէջի հասանելիությունը:

- Նոր ինտերակտիվ ձևաչափեր, ներառյալ՝ քաղաքական լաբորատորիաները, հակաթոններն ու այլ միջոցառումների վրա հիմնված ներգրավման ռազմավարությունը:
- Տարածաշրջանային նախագծեր, ներառյալ՝ հայ-վրացական և հայ-թուրքական կլոր սեղաններ, համագործակցային հետազոտական նախաձեռնություններ և գործունեության տարբեր շրջանակներ, նախատեսված տարածաշրջանային և միջազգային գործընկերներին համախմբելու համար:

4) Տարածաշրջանային և միջազգային համագործակցություն՝ 2026թ. սեպտեմբեր - 2029թ. սեպտեմբեր

Հաջորդ երկու տարում պլանավորում ենք ընդլայնել մեր գործակցության շրջանակը տարածաշրջանային և միջազգային գործընկերների հետ: Մասնավորապես, պլանավորում ենք **միջազգային ներկայություն հաստատել Միացյալ Նահանգներում՝ Վաշինգտոնի գրասենյակի բացման միջոցով**, որը ծառայելու է որպես հարթակ.

- Ամերիկյան վերլուծական կենտրոնների, համալսարանների և քաղաքականության ինստիտուտների հետ ռազմավարական համագործակցության զարգացման համար,
- Միջազգային դոնորական և սփյուռքի ցանցերի հասանելիության հեշտացման համար,
- Գլոբալ անվտանգության և քաղաքականության ֆորումներում հայկական և տարածաշրջանային տեսակետների ներկայացման համար,
- Արտասահմանում գտնվող հայ ուսանողների և գիտնականների աջակցման համար՝ համատեղ հետազոտական և քաղաքական նորարարական ծրագրերի միջոցով,
- Պատվիրակությունների՝ իրենց առաքելության մեջ մեր փորձառական աջակցությունը տրամադրելու համար,
- Հայաստանի փափուկ ուժի կարողության մեջ ներդրում ունենալու համար:

Տարածաշրջանային գործընկերների հետ համագործակցության խորացում՝ Հվ. Կովկասում, Արևելյան գործընկերության երկրներում և Սևծովյան տարածաշրջանում վերլուծական կենտրոնների, համալսարանների և քաղհասարակության դերակատարների մասնակցությամբ.

- **Համատեղ հետազոտական և հրատարակչական նախաձեռնությունների գործարկում՝** թուրքական վերլուծական կենտրոնների հետ համագործակցության վրա հատուկ շեշտադրմամբ,
- **Տարածաշրջանային քաղաքականության երկխոսությունների, կլոր սեղանների և վերապատրաստման ծրագրերի կազմակերպում,**
- Բազմերկրյա նախաձեռնությունների մեջ ներդրում ժողովրդավարական դիմադրունակության, հակամարտությունների կանխման և սահմանազծային համագործակցության ոլորտներում:

Միջազգային դոնորների և բազմակողմանի ուղղվածություն ունեցող ինստիտուտների հետ կապերի ամրապնդում.

- **Մասնակցություն գլոբալ աջակցության հարթակներին և թեմատիկ դաշինքներին** (օր.՝ ՆԱՏՕ, ԵԱՀԿ, ՄԱԿ և քաղաքացիական այլ ֆորումներ),
- ԱՄՆ-ի, Գերմանիայի, Լեհաստանի, Մեծ Բրիտանիայի և այլ երկրների հետ ներկայիս հարաբերությունների նմանությամբ այլ **պետությունների կառավարությունների հետ կապերի ամրապնդում և արդյունավետ համագործակցություն,**
- Տարածաշրջանային ծրագրերի և փորձնական նախաձեռնությունների համար կազմակերպության դիրքավորում որպես տեղական հուսալի **գործընկեր,**
- **Ներգրավվածություն 1.5 և 2-րդ ուղու դիվանագիտական տարածքներում** Ադրբեջանի, Թուրքիայի և այլ տարածաշրջանային գործակիցների հետ՝ միջազգային խաղաղության և անվտանգային քննարկումներում տեղական փորձագիտական ձայնը լսելի դարձնելու համար:

5) **Աշխատանքային գերազանցություն՝ 2026-2030թթ.**

Մեր աշխատանքային համակարգի բարելավման համար պլանավորում ենք՝

2026թ. **փետրվարին** ավարտին հասցնել հիմնական կազմակերպչական փաստաթղթերի ձևակերպումը՝ ապահովելով ստանդարտացված կազմակերպչական ընթացակարգերը, ներառյալ՝

- զարգացման ռազմավարության, դրամահայթայթման ռազմավարության, հաղորդակցության, իրավունքի պաշտպանության և հանրային կապերի ռազմավարության, հարաբերությունների կառավարման ռազմավարության, կազմակերպչական ենթակառուցվածքի/մարդկային ռեսուրսների

փաստաթղթերի (կազմակերպության սխեմա, աշխատանքի ընդունման ռազմավարություն, էթիկայի և վարքագծի կանոնագիրք, աշխատակիցների ռեսուրսներ և արտոնություններ), գործուղումների և ներկայացուցչական ծախսերի փոխհատուցման ընթացակարգի, կամավորության և մասնագիտական փորձառության քաղաքականության, բնապահպանական և կայունության քաղաքականության փաստաթղթավորումը,

- կազմակերպչական փաստաթղթավորման օպտիմալացումը՝ ներքին փաստաթղթերի և տվյալների կառավարման ստանդարտ գործառնական ընթացակարգերը մանրամասնելու համար,
- կիբերանվտանգության վերաբերյալ փաստաթղթային փաթեթ, ներառյալ՝ ստանդարտ գործառնական ընթացակարգերը (ՍԳԸ), անվտանգային քաղաքականություն, ռիսկերի կառավարման և պատահարների արձագանքման պլան, վերապատրաստման և իրազեկման փաստաթղթավորում,
- այս բոլոր փաստաթղթերի խմբավորումը մեկ կազմակերպչական ձեռնարկի/կանոնակարգի մեջ:

Փետրվար, 2026թ.

- Ավարտել կազմակերպության փաստաթղթավորման պատրաստման աշխատանքը,
- Հաստատել և խթանել անձնակազմի ֆիզիկական անվտանգության և SS անվտանգության միջոցները,
- Խթանել կանանց առաջխաղացումն ու անձնակազմի համալրման, զարգացման և ղեկավարման բոլոր մակարդակներում ապահովել գենդերային հավասարությունը՝ ձգտելով փորձագետների և վարչակազմի հավասարակշռված հարաբերակցության.
- Շարունակել կազմակերպության ներսում կայուն բնապահպանական գործելակերպի բարելավումը, ներառյալ՝ ռեսուրսների կայուն օգտագործումը, թափոնների նվազեցումը և շրջակա միջավայրը հաշվի առնող գործունեությունը:

Դեկտեմբեր, 2028թ. (գնահատում և հետագա պլանավորում)

- Իրականացնել **ընթացիկ ֆինանսական և գործառնական գործընթացների ու գործիքների մանրակրկիտ աուդիտ՝** անարդյունավետությունն ու բացերը հայտնաբերելու համար,
- Իրականացնել գործառնական արդյունավետության բարելավումների համապարփակ վերանայում (փաստաթղթային վերլուծություն, անձնակազմի արձագանքների, աշխատանքային հոսքերի քարտեզագրում և համեմատական վերլուծություն (բենչմարկինգ).
- Պլանավորել ծրագրային ապահովման և գործընթացների մասշտաբայնությունն ու հետագա թարմացումները (օրինակ՝ համակարգերի թարմացում, ամպային պահպանում, ավտոմատացում և տվյալների անվտանգություն).
- Նորահայտ տեխնոլոգիաների ինտեգրման ուսումնասիրություն (օրինակ՝ արհեստական բանականության վրա հիմնված վերլուծություն, առաջադեմ CRM համակարգեր):

6. **Քաղաքական ներգրավվածություն և պաշտպանություն**

Որպես իր առաքելության առանցքային բաղադրիչ՝ կազմակերպությունը կամրապնդի իր քաղաքական ներգրավվածության ու պաշտպանության ջանքերն՝ ապահովելու իր հետազոտությունների ու վերլուծությունների արդյունավետ իրազեկումը տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում որոշումների կայացման գործընթացների համար:

Առանցքային առաջնահերթություններից են՝

- **Ռազմավարական հարաբերությունների կառուցում գործընկերների, քաղաքականություն իրականացնողների և պետական ինստիտուտների հետ՝**
    - Համապատասխան նախարարությունների, խորհրդարանական հանձնաժողովների և տեղական մարմինների հետ կանոնավոր խորհրդակցական մեխանիզմներ, քաղաքական կլոր սեղաններ և ճեպազրույցներ ունենալով,
    - Կառավարական առաջնահերթություններին և ժողովրդավարական կառավարման սկզբունքներին համահունչ տեղին և փաստահեն առաջարկություններ տրամադրելով,
    - Անվտանգության, կառավարման և տարածաշրջանային համագործակցության վերաբերյալ փորձագիտական

խորհրդատվություն տրամադրելով և օրենսդրական խորհրդակցությունների մասնակցելով,

- Մեր գործընկեր կազմակերպությունների շրջանակն ընդլայնելով, կառավարական կազմակերպությունների, տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ փոխըմբռնման հուշագրեր ստորագրելով, հետագայում ամրապնդելով մեր կիրառական հետազոտության շրջանակն ու կարողությունները:

- **Պաշտպանական կարողությունների բարելավում**
  - Առաջնահերթ թեմատիկ ոլորտների հետ կապված հստակ պաշտպանական ռազմավարությունների մշակմամբ, ինչպիսիք են ժողովրդավարական դիմադրունակության, անվտանգային կառավարման և տարածաշրջանային խաղաղաշինության ոլորտների ռազմավարությունները,
  - Աշխատակիցներին և ասոցացված փորձագետներին վերապատրաստելով պաշտպանական մոտեցումների, հաղորդակցման, լեզվական հմտությունների և գործընկերությունների կառուցման բնագավառում,
  - Օգտվելով քաղհասարակության կազմակերպությունների, լրատվամիջոցների և ակադեմիական հաստատությունների հետ գործընկերությունից՝ ուժեղացնել քաղաքական ուղերձներն ու համախմբել հանրային աջակցությունը:

- **Տարածաշրջանային և միջազգային քաղաքական հարթակներում տեսանելիության և ազդեցության բարձրացում՝**
  - Անվտանգության, հակամարտությունների լուծման և ժողովրդավարական դիմադրունակության շեշտադրմամբ բազմակողմ երկխոսությունների, գիտաժողովների և աշխատանքային խմբերի ակտիվ մասնակցություն,
  - Ներկայիս մարտահրավերները հասցեագրող և գործնական լուծումներ առաջարկող քաղաքական ամփոփ տեղեկագրերի և քաղաքական փաստաթղթերի հրատարակում կամ փակ շրջանառում.

- **Ներդրումներ քաղաքականության ոլորտի որակավորումների հետ կապված, որը ներառում է.**
  - **Սոցիալական բազմազանություն՝** վերլուծել և պաշտպանել այն քաղաքականությունները, որոնք խթանում են Հայաստանում

թերներկայացված խմբերի՝ կանանց, երիտասարդների և գյուղական համայնքների հասանելիությունն ու ներգրավվածությունը,

- **Տնտեսական քաղաքականություն՝** վերլուծել և պաշտպանել քաղաքականությունները, որոնք նպաստում են արդար, մրցունակ, ազատ շուկաների գոյությանը և կարգավորմանը,
- **Էներգետիկ և շրջակա միջավայրի քաղաքականություն՝** վերլուծել և պաշտպանել քաղաքականությունները, որոնք խթանում են էներգետիկ անկախությունը, թափոնների նվազեցումն ու մաքուր էներգիայի լուծումները:

Քաղաքական ներգրավվածությունը և իրավունքի պաշտպանությունը կազմակերպության կիրառական հետազոտությունների և ողջամիտ մտածելակերպի առաջմղման հիմնական թիրախն են: Լիահույս ենք օգտագործել այս բազմակողմանի մոտեցումների խումբը Հայաստանում քաղաքական և մշակութային փոփոխությունների հասնելու համար, որոնք կերաշխավորեն ժողովրդավարական, կայուն և անվտանգ Հայաստանի գոյությունը:

Ամփոփում

Չնայած առկա լուրջ մարտահրավերներին՝ Հայկական խորհուրդը վստահ է բարգավաճ, անվտանգ և ժողովրդավարական Հայաստան ունենալու հնարավորությունների առկայության հարցում: Ինստիտուցիոնալ շարունակական ամրապնդման, ծրագրային նորարարությունների և ռազմավարական տարածաշրջանային ու միջազգային գործընկերության միջոցով կազմակերպությունը կընդլայնի իր ազդեցությունն ու կուժեղացնի անկախ, փաստահեն ձայների լսելիությունը ներքին և արտաքին ոլորտներում: Մեր նախաձեռնությունները կառուցելու ենք գիտելիքահեն վերլուծությունների, թիրախային քաղաքական պաշտպանության և երկխոսությունների համադրության շուրջ՝ իրազեկելու որոշում կայացնողներին, քաղաքացիական հասարակությանն ու հանրությանը, և ապահովելով Հայաստանի քաղաքական լանդշաֆտի փորձագիտական, թափանցիկ և ժողովրդավար սկզբունքներով ղեկավարումը:

Ռազմավարական զարգացման այս ծրագիրը 2026-2030 թվականների համար նախանշում է գործողությունների պրագմատիկ և հավակնոտ ընթացք՝ արտացոլելով կազմակերպության զարգացման ուղին նոր ձևավորվող նախաձեռնությունից մինչև ամբողջովին հաստատված և վստահելի վերլուծական կենտրոն: Այն հիմնված է մեր

նախորդ ձեռքբերումների վրա, ներառյալ՝ ամրապնդված ինստիտուցիոնալ շրջանակները, ընդլայնված հետազոտական արդյունքները, նորարարական հանրային տարածման աշխատանքները և երկրորդ ուղու դիվանագիտության ակտիվ ներգրավվածությունը, կազմակերպությունը դիրքավորելով որպես ժողովրդավարական դիմադրունակությունն ու տարածաշրջանային խաղաղությունը խթանող կառույց:

Անդավաճան մնալով մեր առաքելությանը՝ մենք զարգանում ենք և դառնում ավելի տեսանելի, բազմակողմանի և վստահելի հաստատություն: Մենք գրկաբաց ընդունում ենք արդարության, մարդկային արժանապատվության և կայուն խաղաղության վրա հիմնված ազգային և տարածաշրջանային օրակարգ ձևավորելու՝ մեր պատասխանատվությունը: Սպասվող ճանապարհը պահանջում է դիմադրունակություն, նորարարություն և համագործակցություն. «Հայկական խորհուրդը» լիարժեք պատրաստ է այս մարտահրավերին: Այս սկզբունքով առաջնորդվելով՝ մեր գործընկերներին, դաշնակիցներին և աջակիցներին հրավիրում ենք միանալ մեզ և ամրապնդել Հայաստանի ժողովրդավարական և անվտանգային հիմքերը, ուժեղացնել մեր ազդեցությունը և ապահովել, որ փաստահեն, անկախ ձայները շարունակեն առաջնորդել երկրի ռազմավարական ապագայի ձևավորումը: